



Բնապահպանության նախարարության գե- րակա ուղղություննե- րը 2017 թվականին

Վարչապետ Կարեն Կարապետյանի գլխավորությամբ կառավարությունում անցած շաբաթ քննարկվել են ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների ու ՀՀ բնապահպանության նախարարությունների գերակա խնդիրների և միջոցառումների կատարման ընթացքն ու հետագա ծրագրերը: ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը ներկայացրել է 2017 թ. համար նախատեսված 8 գերակա խնդրի և 6 միջոցառման կատարման ընթացքը: Անդրադառնալով Արարատյան դաշտի ձկնաբուծական տնտեսություններում ավտոմատ, կենտրոնացված կառավարման համակարգի ներդրման աշխատանքներին՝ նախարարը զեկուցել է, որ սահմանված գործողությունների իրականացմամբ այս տարի նախատեսվում է 1.6 մլրդ խմ օգտագործվող ստորերկրյա ջրերի ծավալը նվազեցնել 570 մլն խմ չափով, հասցնել մինչև 1.1 մլրդ խմ վերականգնվող պաշարին, որն այսօր փաստացի անրագրված է օրենքով: Բայց թիրախն այդ ծավալը մինչև 800 մլն խմ իջեցնելն է՝ վերականգնումն ավելի առանցիկ տեմպերով իրականացնելու համար: Դա, նախարարի խոսքով, բերելու է նաև ձկնաբուծական տնտեսություններում և մյուս ոլորտներում ջրառաջարկի հայտերի վերանայմանն ու ջրօգտագործման թույլտվությունների փոփոխմանը: Վարչապետը հետաքրքրվել է բնապահպանության ոլորտի ներդրումային ծրագրերի ուղղությամբ կատարվող աշխատանքների



մասին: Արծվիկ Մինասյանը զեկուցել է, որ այս պահի դրությամբ առկա է տնտեսական զարգացման ներդրումային 25 նախագիծ, այդ թվում՝ Գառնու ճոպանուղու, «Ջերմուկ» ազգային պարկի ստեղծման ծրագրերը: Կառավարության ղեկավարը, ամփոփելով խորհրդակցությունը, հանձնարարել է նախարարներին և գերատեսչությունների ղեկավարներին՝ վերլուծել առաջին եռամսյակի համար նախատեսված գերակա խնդիրները, միջոցառումները, ներդրումային ծրագրերը: «Յուրաքանչյուր նախարարությունից, գերատեսչությունից սպասում ենք նաև 5 տարվա ծրագիր՝ հատուկ ուշադրություն դարձնելով 2017 թվականին, որպեսզի բոլոր նախապատրաստական աշխատանքները կատարվեն, և նորմալ հիմք ստեղծենք 2018 թվականի համար», - սսել է վարչապետը: Անդրադառնալով ՀՀ կառավարության վերջին նիստում տրված հանձնարարականներին՝ Կարեն Կարապետյանը նշել է, որ հաջորդ շաբաթվանից նախարարություններն ու գերատեսչությունները պետք է սկսեն հաշվետվություն ներկայացնել 6-ամսյա գործունեության վերաբերյալ:

Հայաստանում էկոտուրիզմը լուրջ ներուժ եւ ապագա ունի



ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը մասնակցել է Հայաստանի ամերիկյան համալսարանում կազմակերպված «էկոտուրիզմը Հայաստանում համաժողով-2017» միջոցառմանը, որի նպատակն է խթանել էկոտուրիզմի զարգացումը Հայաստանում: Բնապահպանության նախարարը իր ելույթում կարևորել է էկոտուրիզմի զարգացումը որպես բնապահպանական խնդիրների լուծման միջոց և ընդհանրապես՝ Հանրապետության տնտեսական առաջընթացի խթան: Ողջունի խոսքով հանդես է եկել Հայաստանի ամերիկյան համալսարանի նախագահ Արմեն Տեր Կյուրեղյանը: Համաժողովին քննարկվել է էկոտուրիզմի զարգացման շահագրգիռ կողմերի ցանցի ստեղծման գաղափարը: Ոլորտում մասնագիտացված կառույցները ներկայացրել են իրենց փորձը: ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ Խաչիկ Հակոբյանը հանդես է եկել զեկույցով, որում ներկայացրել է էկոտուրիզմի զարգացման ուղղությամբ տարվող պետական քաղաքականության հիմնական սկզբունքները: Ծավալված քննարկումների ժամանակ հնչել են տարբեր մոտեցումներ և առաջարկներ, անդրադարձ է եղել էկոտուրիզմի զարգացման քաղաքականության մշակման գործում հատուկ պահպանվող տարածքների նշանակությանը: Քննարկվել են նաև էկո-

տուրիզմի ներուժի մարքեթինգին և ոլորտի ֆինանսավորման հարցերին վերաբերող հարցեր: Համաժողովին ներկա են եղել մի խումբ բնապահպան-ակտիվիստներ, որոնք իրենց մտահոգությունն են հայտնել նախորդ շաբաթ Գոշ լճում առանց թույլտվության իրականացված մաքրման աշխատանքների վերաբերյալ: Նախարար Արծվիկ Մինասյանի առաջարկով բնապահպանների բարձրացրած հարցը քննարկվել է առանձին սրահում: Նախարարը ներկաներին տեղեկացրել է, որ պետական սեփականություն հանդիսացող լճի հարակից տարածքը կառուցապատման իրավունքով հանգստի գոտի կազմակերպելու և սպասարկման ծառայություններ մատուցելու նպատակով, համաձայն 2015 թ, հունիսի 23-ին «Դիլիան» ազգային պարկի հետ կնքված պայմանագրի, օգտագործման է տրվել «Վենդոռ» ՍՊԸ-ին: Պայմանագրով պահանջ է դրված եղել, որ ցանկացած ծրագրի, մեծ գաղափարի իրականացումից առաջ պետք է իրականացվի էկոփորձաքննություն: Նաև մի շարք պահանջներ է դրված նրանց առաջ՝ շրջակա միջավայրի էկոհամակարգերն անվնաս պահելու համար: Քանի ծրագիր չի ներկայացվել, փորձաքննություն չի անցել, հանրային քննար-



կումներ չեն իրականացվել, այնտեղ որևէ աշխատանք չի կատարվի», - ասել է Ա. Մինասյանը և հավելել. «Դիլիան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրինության կողմից կատարված է աշխատանքները, նաև ձեր քաղաքացիական ակտիվ դիրքորոշման շնորհիվ: Կատարված է ցանկացած աշխատանք, մինչև չմշակվի ծրագիր, չանցնի մանրամասն փորձաքննություն, մինչև չանցնի հանրային լայն քննարկումների շրջափուլը, չլինի փորձաքննական դրական եզրակացություն»:

Հայաստանի Կանաչ կլիմայական հիմնադրամի հաջողված փորձը ներկայացվեց Գրոզատանին



Գրոզատանի Հանրապետության կառավարության նախաձեռնությամբ ՀՀ բնապահպանության նախարարությունում տեղի է ունեցել աշխատանքային հանդիպում՝ Կանաչ կլիմայական հիմնադրամի ուղղությամբ Հայաստանի իրականացրած աշխատանքների հաջողված փորձին ծանոթանալու նպատակով:

• Հայաստանի Կանաչ կլիմայական հիմնադրամի հաջողված փորձը ներկայացվեց Ղրղզստանին

Սկիզբը էջ 2 |

Հանդիպմանը մասնակցել են ՀՀ բնապահպանության նախարարության ներկայացուցիչները՝ ՀՀ բնապահպանության նախարարի առաջին տեղակալ Ս. Պապյանի գլխավորությամբ և Ղրղզստանի Հանրապետության ներկայացուցիչները՝ Ղրղզստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ Ս. Ումետալիևի գլխավորությամբ, ինչպես նաև ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի կայուն աճի և զարգացման բաժնի ղեկավար Ա. Մարտիրոսյանը:

Ողջույնի խոսքում Ս. Պապյանը կարևորել է ոլորտին առնչվող հարցերի շուրջ միջազգային հարթակներում երկու երկրների ներկայացուցիչների արդյունավետ համագործակցությունը: Նա ներկայացրել է կլիմայի փոփոխության հարցերով Հայաստանի Հանրապետության կողմից իրականացվող աշխատանքների հիմնական մեխանիզմները և պատասխանատու կառույցների համագործակցության առանձնահատկությունները: Ղրղզստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ Ս. Ումետալիևը շնորհակալություն հայտնելով հանդիպման հնարավորություն ընձեռելու համար՝ նշել է, որ իրենց հետաքրքրում է Կանաչ կլիմայական հիմնադրամի հետ Հայաստանի Հանրապետության համագործակցության հաջողված փորձը: Ա. Մարտիրոսյանը գոհունակությամբ նկատել է, որ ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը դարձել է կլիմայական ֆինանսավորման հարցերում պետությունների համապատասխան գե-



րատեսչությունների համագործակցության սերտացման հարթակ: ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոմպենցիայի ազգային համակարգող Ա. Գաբրիելյանը ներկայացրել է «Հայաստանի կլիմայական քաղաքականության հիմնական ուղիները և ֆինանսական գործիքները» խորագրով ելույթը, իսկ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ տնօրենի տեղակալ Ս. Բալոյանը տվել է տեղեկատվություն՝ Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի, Ադապտացիոն հիմնադրամի և Կանաչ կլիմայական հիմնադրամի հետ Հայաստանի համագործակցության վերաբերյալ: Ելույթներին հաջորդել են երկկողմանի համագործակցության հնարավոր ուղիների և այլ հարցերի վերաբերյալ քննարկումները:

Ռազմավարական էկոլոգիական գնահատման է ենթարկվել կոշտթափոնների կառավարման ազգային ռազմավարական պլանը



«ԱնիՊլազա» հյուրանոցում տեղի է ունեցել «Հայաստանի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ազգային ռազմավարական պլանի, ճանապարհային քարտեզի և երկարաժամկետ ներդրումային ծրագրի» Ռազմավարական էկոլոգիական գնահատման (ՌԷԳ) զեկույցը թեմայով աշխատաժողով-քննարկումը: Աշխատաժողովի նպատակն էր ներկայացնել և քննարկել ՌԷԳ զեկույցը՝ ներառյալ վերլուծության հիմնական առաջարկներն և առաջարկվող կանխարգելիչ գործողությունները՝ ուղղված Հայաստանում աղբի կառավարման ոլորտին: Մասնակիցներին ներկայացվել են ՌԷԳ-ի ընթացակարգով արդեն իսկ արված քայլերը, ինչպես նաև՝ ծրագրում կիրառված մեթոդաբանությունը: Քննարկման արդյունքները կներառվեն վերջնական զեկույցում: Աշխատաժողովը կօժանդակի ազգային կարողությունների զարգացմանը՝ ՌԷԳ հիմնական շահառուների, որոշում կայացնողների, պետական կառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների և փորձագետների շրջանում:

շարունակությունը էջ 3 |

• Ռազմավարական էկոլոգիական գնահատման է ենթարկվել կոչսթափոնների կառավարման ազգային ռազմավարական ղյանը

Սկզբը՝ էջ 3 |

Ողջույնի խոսքով հանդես է եկել ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ Խ. Հակոբյանը, ով ներկայացրել է իրականացված աշխատանքները: «ՌԷԳ-ի գործընթացում մենք իրավիրել ենք բոլոր շահագրգիռ կողմերին և մեր գործողությունների մասին տեղյակ պահել նրանց:

Այսօր ամփոփում ենք կատարված աշխատանքները: Այս քննարկումը նաև կաջակցի ՀՀ Բնապահպանության, Տարածքային կառավարման նախարարություններին հետևել և իրականացնել «Հայաստանում կոչտ թափոնների կառավարման ազգային ռազմավարական պլանի,

ճանապարհային քարտեզի և երկարաժամկետ ներդրումային ծրագրի» ՌԷԳ-ի արդյունքում մշակված առաջարկությունների իրականացմանը՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան: Առաջօր չկար ռազմավարական էկոլոգիական գնահատումը ՀՀ-ում կիրարկելու նախադեպ և այն առաջին ծրագիրն է, որի համար մենք հայցեցինք Եվրամիության աջակցությունը և նրանց փորձագետների հետ իրականացրեցինք այդ գնահատման գործընթացը» - նշել է Խ.Հակոբյանն իր խոսքում:

Ինչ վիճակ է «Ձանգեզուր» կենսոլորտային համալիրում եւ «Խոսրովի անտառ» պետական արգելոցում



ՀՀ բնապահպանության նախարարության «Ձանգեզուր» կենսոլորտային համալիրի տնօրինության տակ գտնվող ԲՀՊՏ-ներում շարունակվում են շուրջօրյա հերթապահությունները, իրականացվում են պարբերական շրջայցեր:

«Ձանգեզուր» կենսոլորտային համալիրի գիտության բաժնի աշխատակիցների կողմից կազմակերպվել են ստուգայցներ «Շիկահող» պետական արգելոց մասնաճյուղում, որոնց ընթացքում տարածքում հանդիպել են 4 հատ եվրոպական այծյամ, 1 հատ փորսուղ, 1 հատ աղվես, 6 հատ շնագայլ: Թռչուններից տարածքում հանդիպել են սև կեռնեխ, սոսնձակեռնեխ, խայտաբղետ փայտփոր, կանաչ փայտփոր, արշալուսիկ, գարնանային գեղգեղիկ, անապատային մորեհավ, գյուղական ծիծեռնակ, քաղաքային ծիծեռնակ, սովորական կարմրատուտ, հոբալ, անտառային աղավնի, սովորական սարյակ, մեծ երաշտահավ, սև երաշտահավ, երկարագի երաշտահավ, երկնագույն երաշտահավ, սև ագռավ, անտառային կաչաղակ, տափաստանային ճռռակ, և անտառաբու: Թռչուններից գարնանային վերադարձ է գրանցվել գյուղական և քաղաքային ծիծեռնակների, գարնանային գեղգեղիկի և անապատային մորեհավի մոտ: Կատարվել են «Սոսու պուրակ» պետական արգելավայր մասնաճյուղի տնկարանի

ցանքսի շարունակական աշխատանքները:

Նախապատրաստական աշխատանքներ են տարվում «Ձանգեզուր» կենսոլորտային համալիրի տարածքում հանդիպող վայրի կենդանատեսակների և թռչնատեսակների, անտառային վնասատուների և հիվանդությունների ուսումնասիրման համար: ՀՀ բնապահպանության նախարարության «Խոսրովի անտառ» պետական արգելոց»-ի աշխատակիցների կողմից «Խոսրովի անտառ» պետական արգելոց», «Խոր Վիրապ», «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրերի միջոցառումները պատշաճ իրականացնելու համար իրականացվել են շուրջօրյա հերթապահություններ և շրջապայություններ:

«Խոսրովի անտառ» պետական արգելոց»-ի գիտական բաժնի կողմից շարունակվում են ողնաշավոր կենդանատեսակների և գիշատիչ թռչունների կենսաէկոլոգիական առանձնահատկությունների ուսումնասիրման և հաշվառման աշխատանքները:

Կենդանիների պոպուլացիային և միգրացիոն ուղիներին հետևելու համար Վայրի բնության հիմնադրամի /WWF/ հետ համատեղ շարունակվում են տեսա և ֆոտոբռնիչների օգնությամբ կատարել կենդանական աշխարհի սեզոնային միգրացիային ուղղված աշխատանքներ:

Այս անգամ շրջակա միջավայրին հասցված վնասը կազմել է 7.5 մլն. դրամ

ՀՀ բնապահպանության նախարարությունը խախտումների դիմաց մեկ շաբաթվա ընթացքում հաշվարկել է 7.5 մլն. դրամի շրջակա միջավայրին հասցված վնաս ՅՅ բնապահպանական պետական տեսչության կողմից 10.04-14.04.2017 թթ. ժամանակահատվածում իրականացված շրջայցերի, ԲՊՏ վարույթին հանձնված գործերի քննության և հաշվետվությունների ընդունման գործընթացում հայտնաբերված խախտումների արդյունքում կայացվել է 330.0 հազ.դրամ ընդհանուր գումարի վարչական տուգանքի 6 որոշում և հաշվարկվել 7.5 մլն. դրամ ընդհանուր գումարի շրջակա միջավայրին հասցված վնաս: Մասնավորապես՝

Բուսական աշխարհի պահպանության ոլորտ

Կազմվել է վարչական տուգանքի 5 որոշում՝ 250.0 հազ. դրամ ընդհանուր գումարի և հաշվարկվել է 7.5 մլն. դրամ ընդհանուր գումարի շրջակա միջավայրին պատճառված վնաս, որից՝ Երևան քաղաքի Դավթաշեն վարչական տարածքում հատված 29 ծառերի համար հաշվարկվել է շրջակա միջավայրին հասցված 2.86 մլն. դրամ գումարի վնաս և գործին համապատասխան ընթացք տալու համար այն ուղարկվել է ՅՅ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Մաշտոցի բաժին: Տավուշի տարածքային բաժնի վարույթին հանձնված գործերի քննության արդյունքում 5 ֆիզիկական անձանց նկատմամբ ապօրինի հատված 14 ծառի համար կայացվել է 250.0 հազ.դրամ ընդհանուր գումարի վարչական տուգանքի 5 որոշում և հաշվարկվել է 1.81 մլն. դրամ ընդհանուր գումարի շրջակա միջավայրին հասցված վնաս: ՅՅ ԲՆ-ի «Թեժ գծի» ահազանգերի հիմքերով Տավուշի ՏԲ-ի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները՝

-«Դիլիջան ԱՊ» ՊՈԱԿ-ի տարածքում հատված ապօրինի ծառահատումների հիմքով իրականացվել են ուսումնասիրություններ, ինչի արդյունքում հայտնաբերվել են ապօրինի հատված 14 ծառ, հաշվարկվել է պետությանը պատճառված 1.9 մլն. դրամ գումարով վնաս:

-Իջևանի անտառտնտեսության «Աշոտ Երկաթ» բերդ հատվածում կատարվել է ուսումնասիրություն և հատված 21 ծառի համար հաշվարկվել է շրջակա միջավայրին պատճառված 0.93 մլն. դրամ գումարի վնաս:

Ապօրինի որսի իրականացման համար

Շաբաթվա ընթացքում հայտնաբերվել և առգրավվել է 274 հատ (162.0 կգ) «սիգ» տեսակի ձուկ, որից՝ Երևանի տարածքային բաժնի կողմից Սևանա լճից «սիգ» ձկնատեսակի ապօրինի որսի և դրա վաճառքի կանխարգելմանն ուղղված միջոցառումների արդյունքում շաբաթվա ընթացքում Երևան քաղաքի շուկաներից առգրավվել է 87 հատ (36.0 կգ) «սիգ» տեսակի տիրազուրկ թարմ ձուկ, որն օրենքով սահմանված կարգով նվիրաբերվել է ՅՅ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Ձատիկ» երեխաների աջակցության կենտրոն ՊՈԱԿ և ՅՅ կրթության և գիտության նախարարության Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր: Արարատի տարածքային բաժնի կողմից իրականացված շրջայցերի արդյունքում հայտնաբերվել է ձկան ապօրինի վաճառքի մեկ դեպք,



առգրավվել է 45 հատ (18.0 կգ) «սիգ» տեսակի ձուկ, որը հանձնվել է «Առաքելություն Յայաստան» հասարակական կազմակերպությանը: ԲՊՏ կենտրոնական ապարատի աշխատակիցների կողմից շրջայցերի արդյունքում առգրավվել է 142 հատ (108.0 կգ) «սիգ» տեսակի ձուկ: Արագածոտնի տարածքային բաժինը ուսումնասիրել է Ապարան և Թալին քաղաքներում անազատության մեջ պահվող 2 արջի պահման իրավական հիմքերը, աշխատանքներն ընթացքի մեջ են:

Թափոնների ոչ ճիշտ տեղադրման համար

Ի արձագանքումն նախարարության «թեժ» գծով ստացված ահազանգի, Կոտայքի ՏԲ-ն ուսումնասիրել է «Քանաքեռ ՅԷԿ»-ի տարածքում անօրինական տեղադրված շինարարական թափոնների պատկանելիության հարցը և Ջովունի համայնքի ղեկավարին տրվել է հետազայում նմանատիպ դեպքերի բացառման մասին հանձնարարական:

Բնապահպանական և բնօգտագործման վճարների եռամսյակային հաշվետվությունները սահմանված ժամկետում չներկայացնելու համար

Շիրակի տարածքային բաժնի կողմից 1 տնտեսվարողի նկատմամբ կայացվել է 80.0 հազ. դրամ գումարի վարչական տուգանքի որոշում: Վարչարարության և փորձաքննության բաժինը հաշվետու ժամանակաշրջանում դատական ակտերի հարկադիր կատարման է ներկայացրել 3 վարչական տուգանքի որոշում՝ 250.0 հազ. դրամ ընդհանուր գումարի չափով: ՅՅ վարչական դատարան է ներկայացվել 8 հայցադիմում՝ 788.0 հազ. դրամ պատճառված վնասի և վարչական տուգանքի գումարները դատական կարգով գանձելու համար:

Ընդհանուր առմամբ ՅՅ բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչության կիրառած պատժամիջոցներից հաշվետու ժամանակահատվածում ՅՅ պետական բյուջե է մուտքագրվել 1.0 մլն. դրամ գումար:

Ծիծառնակաբերդում Բնապահպանության նախարարության աշխատակիցները տնկեցին ավելի քան 1000 ծառ



« Բնապահպանության նախարարության աշխատակիցները մասնակցել են Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված գարնանային շաբաթօրյակ-ծառատունկին: Նախարարության աշխատա-

կիցները Կենտրոն վարչական տարածքի Ծիծեռնակաբերդի անտառապուրակի տարածքում գարնանային ծառատունկի և կանաչապատման աշխատանքների շրջանակներում տնկել են մոտ 1000 ծառ:

«Դիլիջան» ազգային պարկն օրեցօր դառնում է ավելի գրավիչ



« Դիլիջան» ազգային պարկում շարունակվում են շուրջօրյա ստուգայցերը ապօրինի ծառահատումների և որսագողության դեպքերը կանխարգելելու և բացահայտելու նպատակով: Աշխատակիցների կողմից շուրջօրյա շրջայցերի ընթացքում հայտնաբերվել է 4 անտառխախտման դեպք /ապօրինի 11 ծառահատում/, կազմվել են անտառխախտման արձանագրություններ և ուղարկվել 33 բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության Տավուշի տարածքային բաժին: Բնակչությանը տրամադրվել է քամատապալ, հողմատապալ փայտանյութից առաջացած Ցխ.մ. վառելափայտ: Գիտության բաժնի աշխատակիցների կողմից կատարվել է արծաթափայլ եղևնու սերմերի ցանքս: Էկոթրոլիների ընթացիկ վիճակին ծանոթանալու նպատակով իրականացվել է շրջայց Պարզ լիճ-Գոշավանք երթուղու սկզբնամասում գտնվող խաչքարերի



տարածքում: Ռեկրեացիոն և էկոտուրիզմի աշխատակիցների կողմից էկոտուրիզմի գովազդման նպատակով այցելություններ են իրականացվել Դիլիջան քաղաքում գործող հյուրատներ և բացատրել, որ էկոտուրիզմի սիրահարները կարող են այցելել Դիլիջան ազգային պարկ և օգտվել ազգային պարկի կողմից մատուցվող ծառայություններից: Ազգային պարկը ունի 19 երթուղի և մեկ հեծանվային երթուղի, որոնց մեջ ներառվում են պատմամշակութային կոմպլեքսներ, բնության հուշարձաններ: Այցելուները հնարավորություն ունեն մաս տեղադրել վրաններ, ինչպես նաև դիտակետերից հետևել կենդանական աշխարհի շարժին:

Պարզաբանում Գոշ լճի հարակից տարածքում իրականացվող մաքրման աշխատանքների վերաբերյալ

Տեսլուք սոցիալական ցանցում տարածվել էր տեղեկատվություն, ըստ որի՝ Գոշ լճի տարածքում իրականացվում է ապօրինի հողային աշխատանքներ: ՀՀ բնապահպանության նախարարությունը հայտնում է, որ «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ռեկրեացիոն գոտու «Գոշ լիճ» տեղամասից՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքով հանգստի գոտի կազմակերպելու և սպասարկման ծառայություններ մատուցելու նպատակով, համաձայն 23.06.2015 թվականին կնքված պայմանագրի, օգտագործման է տրվել «Վենդոռ» ՍՊԸ-ին: Ըստ պայմանագրի՝ կառուցապատման իրավունք ունեցող անձը պարտավոր է բարեկարգել տարածքը, մաքրել աղբից և չոր ճյուղերից, չխախտել լճի էկոհամակարգը և էնդեմիկ կարգավիճակը: «Դիլիջան» ազգային պարկի և Բնապահպանական պետական տեսչության աշխատակիցների կողմից տեղում կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ «Վենդոռ» ՍՊԸ-ն իրականացրել է տարածքը չորացած փայտից և աղբից մաքրելու աշխատանքներ, որոնք այս պահին դադարեցված են:



Կատարվում են ուսումնասիրություններ: Գոշ լճի հարակից տարածքներում նախատեսված աշխատանքները կատարվելու են համաձայն «Վենդոռ» ՍՊ ընկերության հետ կնքված պայմանագրով հաստատված ծրագրի՝ բնապահպանական փորձաքննություն անցնելուց հետո:

Իրականացվում են ուժեղացված շրջայցեր

ՀՀ բնապահպանության նախարարի 07.04.2017 թ. հրամանի համաձայն Բնապահպանական պետական տեսչությունը ՀՀ ոստիկանության աջակցությամբ իրականացնում է ուժեղացված շրջայցեր Հանրապետության տարածքում և մայրուղիներում: Միայն Երևան քաղաքում կատարված շրջայցերի ընթացքում ս.թ. ապրիլի 12-13-ին 4 դեպքով (Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջաններից) հայտնաբերվել է 48 հատ (21 կգ) «սիգ» տեսակի տիրազուրկ թարմ ձուկ: Հայտնաբերված ձկները նվիրաբերվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Ձատիկ» երեխաների աջակցության կենտրոն ՊՈԱԿ-ին: Միջոցառումները շարունակվում են:

Բնության պետական թանգարանը թարմացնում է իր հավաքածուները

Բնության պետական թանգարանի ֆոնդերում առկա են ավելի քան 6 հազար ցուցանմուշներ, որոնց թիվը տարեց տարի ավելանում է և որոնց մեկ երրորդը (շուրջ 2000-ը) ներկայացվում է այցելուների մշտական և ժամանակավոր ցուցադրությանը: Թանգարանի չորս սրահներում ցուցադրվում են ֆլորայի և ֆաունայի հազվագյուտ տեսակներ, որոնք արտացոլում են մեր երկրի բնության յուրահատկություններն ու ընդերքի հարստությունը: Ներկայացված են կաթնասունների, թռչունների, սողունների, երկկենցաղների, ձկների, միջատների, սարդակերպերի խրտվիչակներ, կմախքներ, մաշկեր, փափկամարմինների խեցիներ, ծառերի կտրվածքներ, հերբարիումի, բրածո բույսերի ու կենդանիների, օգտա-

պետության բնակավայրերում և մայրուղիներում: Միայն Երևան քաղաքում կատարված շրջայցերի ընթացքում ս.թ. ապրիլի 12-13-ին 4 դեպքով (Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջաններից) հայտնաբերվել է 48 հատ (21 կգ) «սիգ» տեսակի տիրազուրկ թարմ ձուկ: Հայտնաբերված ձկները նվիրաբերվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Ձատիկ» երեխաների աջակցության կենտրոն ՊՈԱԿ-ին: Միջոցառումները շարունակվում են:

կար հանածոների նմուշներ, յուղաներկ կտավներ, գծանկարներ և այլն:

Գնալով ավելանում է թանգարան այցելողների թիվը: Այն այս տարվա տարեսկզբից մինչև այժմ կազմում է մոտավորապես 3000 հոգի: Թանգարան այցելողները ներկայացնում են հասարակության տարբեր շերտեր՝ դպրոցականներ, ուսանողներ, մեծահասակներ, առանձին ընտանիքներ: Սա վկայում է այն մասին, որ մեծացել է հետաքրքրությունն էկոլոգիական կրթության, դաստիարակության և էկոլոգիական մշակույթի ձևավորման նկատմամբ: Վերջին ամիսների ընթացքում հիմնական ֆոնդը համալրվել է «Սև կեռնեխ» /*Turdus merula*/ ցուցանմուշով, որը պատկանում է ճնճուկազգիներին և աչքի է ընկնում իր արու տեսակի՝ սրինգի ձայնը հիշեցնող երգեցողությամբ և նույնպես ճնճուկազգիներին պատկանող «դաշտային ճնճուկ» տեսակներով: Դրանք տարածված են ինչպես Հայաստանում, այնպես էլ Եվրոպայում, Աֆրիկայում, Փոքր Ասիայում և Չինաստանում:

Թանգարանի առօրյա հետաքրքիր են դարձնում նաև ՀՀ տոների նվիրված միջոցառումները:

Գլաձորի հանքի շահագործման թեման կրկին թեժ է

Ապրիլի 25-ին՝ ժամը 16:30-ին, ՀՀ վարչական դատարանում, տեղի կունենա դատական նիստ Գլաձորի բազմամետաղային հանքավայրի գործով: «Վայկ Մետալ» ՍՊԸ-ն բողոքարկում է Գլաձորի բազմամետաղային հանքավայրի շահագործման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության հաշվետվությանը տրված բացասական եզրակացությունը: Պատասխանող կողմերն են՝ ՀՀ բնապահպանության և էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունները: Այս բացասական եզրակացության մեջ հաշվի է առնված համայքների դեմ լինելը: Ապրիլի 13-ին՝ Երևանի Օրիոս կենտրոնում անցկացված քննարկման ժամանակ, Գլաձոր և Վերնաշեն համայքների ներկայացուցիչները մտավախություն հայտնեցին, որ չնայած բացասական եզրակացությանը, «Վայկ Մետալ» ՍՊԸ-ն քայլեր կձեռնարկի հանքի շահագործման համար:

Ինչպես ներկայացրեց Վերնաշենի համայնքապետ Միքայել Բաղդասարյանը, հանքի շահագործումը կթունավորի համայնքի խմելու և ոռոգման ջուրը, կաղտոտի արոտավայրերը, կվնասի գյուղատնտեսությանը: «Այդ սարի աջ և ձախ մասից հոսում են ջրեր, որոնք անցնում են Արյունաշեն, Հերիեր, Մալիշկա գյուղերի միջով, լցվում Հերիերի ջրամբար: Այստեղից ոռոգվում է 14 գյուղ: Էնտելից էլ թափվում է Արփա գետ: Մյուս թևի ջուրն անցնում է Վերնաշենով, Գլաձորով և Մալիշկայով, թափվում է Եղեգիս գետը: Այնտեղ մենք ունենք քաղցրահամ ջրեր, խմելու ջրեր: Բոլորդ տեղյակ եք Վերնաշեն գինուց: Այդ ջուրը ոռոգում է 98 տնտեսության 70 հա Վերնաշեն գինու հունք հանդիսացող խաղողի այգիներ: 1000 հա ալպյան գոտի է փչացնելու, որի 1 քմ վրա 120 տեսակի ծաղիկ է աճում:



Էկոլոգ



Մեր տնտեսությունը մենակ այդ տարածքից 14 տոննա մեղր է ստացել: Այդ տարածքը բեզոարյան այծի ծննդաբերության ժամանակ նպաստավոր վայր է»,- ասաց Վերնաշենի համայնքապետը: Հայաստանի կանաչների միության նախագահ Հակոբ Սանասարյանը ասաց, որ Գլաձորի հանքի տարածքում ցրված ուրան կա: Սակայն նախագծերում չի նշվում ռադիոակտիվ տարրերի մասին, որ մարդիկ չվախենան: «Սնդիկը և ռադիոակտիվ տարրը, թորիումը ուրանը և այլն, նախագծերում չկա: Անգամ էքսպերտները, որոնք հետո պիտի որոշում կայացնեն, նրանցից է ծածուկ պահվում դա», - նշեց Հակոբ Սանասարյանը: «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի փորձագետ Կարինե Մովսիսյանը ներկայացրեց բացասական եզրակացությունը, որի համար հիմք է հանդիսացել հետևյալը՝

- «Եղեգնաձոր» արգելավայրի վրա հանքի հնարավոր ազդեցությունը բացառելու մասին անհրաժեշտ միջոցառումներ փորձաքննությանը չներկայացնելը
 - նախագծով բաց եղանակով հաստատված պաշարների մոտ 0.6 տոկոսի շահագործման նախատեսումը, այնինչ անհրաժեշտ էր ներկայացնել հանքավայրի համալիր փաստաթղթերը՝ ներառյալ հանքավայրի մնացած 99.4 տոկոսը
 - նախագծում նախատեսվող գործունեության տարածքի հիդրոերկրաբանական պայմանների լիարժեք ուսումնասիրության և աղբյուրների վրա հնարավոր ազդեցության գնահատումների բացակայությունը
 - Վերնաշեն և Գլաձոր համայնքների բացասական կարծիքները:
- Գլաձորի բազմամետաղային հանքավայրը գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզում՝ Գլաձոր համայնքի վարչական տարածքում: Հանքավայրում հաշվարկվել է կապարի 628.37 հազ.տ, ցինկի 711.44 հազ.տ, պղնձի 63.4 հազ.տ, կադմիումի 2605.3տ, արծաթի 201.18 տ, ոսկու 9789.0 կգ պաշար: Մեկ տոննա հանքաքարում կապարի պարունակությունը 4.34% է, ցինկինը՝ 4.92%, պղնձինը՝ 0.44%, կադմիումինը 0.018%, արծաթինը՝ 13.90 գր/տ, ոսկունը՝ 0.68 գր/տ:

Նախագիծը՝ Արծուն Պեղանյանի
 խմբագիր՝ Սանվել Սկրչյան
 Ձևավորումը՝ Նարինե Բաղդասարյանի
 Նյութերը՝ ՀՀ ԲՆ Տեղեկատվության և հասարակության հետ կապերի վարչության

Հեռախոս՝
 011 818 517